

Սյունիքում մեկնարկել են գարնան գյուղատնտեսական աշխատանքները

25.03.2015թ.

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2015թ. գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզվառելիք, ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռք բերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնզանի արտադրության զարգացման» ծրագրի շրջանակներում մարզի գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման համար ՀՀ կառավարություն հայտ է ներկայացվել հողօգտագործողներին անհրաժեշտ 1մլն. 500հզ.լ դիզվառելիքի, 2200տ ազոտական պարարտանյութի, 250 տ գարնանացան գարու, 2 տ առվույտի սերմացուի վճարունակ պահանջարկի վերաբերյալ: 2013թ. մարզին հատկացվել է 124.5տ կորնզանի սերմացու, որից նույն տարում. իրացվել է 64,5 տ, 2014թ.-ին՝ գյուղացիական տնտեսություններին բաշխվել է 30տ : Այս տարվա. համար պահեստավորված 30տ սերմացուն ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 941-Ն որոշման համաձայն անվճար բաշխվել է 51 համայնքի, 0.7 տ եգիպտացորենի սերմացուն՝ 14 համայնքի: